

'ի նմա ոսկեզարդ գահոյք, յորս բազմեալ երևիարքայնազերի ճոխութեամբ, շուրջ զիւրեաւ ունելով պատանեակս լուսատեսակս սպասաւորս ուրախութեան, ընդ նմին և դասս գուսանաց, և խազս աղջկանց զարմանալոյ արժանիս. անդէն և սուսերամերկաց հոյլք, և ըմբշամարտաց պատերազմունք. անդ և դասք առիւծուց, և այլոց գազանաց. և անդ երամբ հաւուց զարդարեալք 'ի պէսպէս պաճուճանս, զոր եթէ զամենայնն որ 'ի նմա գործք 'ի թիւ որ կամիցի արկանել, բազում աշխատութեան պէտք են անձինն՝ եւ լսողաց :

Եւ է փառք տաճարին ահեղ իմն և զարմանալի, եղեալ են 'ի նմա դրունք հատուածոյք մանր յօրինուածով և հրաշալի գեղգեղմամբ 'ի բանալն իւրեանց, երկբայիկք են օդաբերք զովայուցիչք. իսկ հուսպ առ միմեանս գոլով՝ երևին իբրև զմի պատկեր :

Պատմեաց մեզ եւ հաւատարիմ ստիկան մի 'ի գործավարաց քաղաքին՝ եթէ եմուտ 'ի շինուած տաճարին երկաթ լտերս իբրև երկերիւր հազար. և հաւաստապէս ճշմարտութեամբ նւազեաց զասելն, քան թէ առատութեամբն յաւելեաց 'ի բազումս. իսկ և նիստ փառաց տաճարին յամենայն կողմանց գաւառին 'ի մէջ քաղաքին երևի իբրև զմեծ մի բլուր, ոչինչ նուազեալ բարձրութեամբ քան զքարանձաւ ծայր կղզոյն :

Պարսպէ անմերձենալի ամրութեամբ և զծայրս ամրոցին. և շինեալ 'ի նմա շտեմարանս մեծամեծս, և համբարանոցս, միանգամայն և տունս գանձուց և զինուց և ասպազինաց անհուն բազմութեանց : Եւ եթէ զամենայն ըզզարդ շինուածոյն, զոսկեզարդ փողոցսն և զգումբէթակապ խորանայարկսն, և զզանազան տեղիս գահոյիցն, որք առաւել այլակերպութեամբ մի քան զմի գերահրաշապէս փայլեն, և ըստ արժանեացն մանրամասնաբար գովասանել որ կամիցի, կարծեմ՝ թէ յանհասութիւն ձկտեալ տատանի, որ և հասանելոյ չէ կարողութիւն : Եւ այց մեր զգի-

պողսն և զպատշաճաւորան՝ որքան է կարողութիւն, 'ի լրումն ընծայեցաք գեղեցիկ քոյոցդ ախորժակաց, ո՞վ քաջագգի և տան մեծի արգասաւոր և նախնական մեծ :

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ

Ուրիշ անգամ մըն ալ այս մատենագրին Աղթամարի եկեղեցոյն վրայ ըրած նկարագրութիւնը կը գնենք օրագրիս մէջ :

ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Համայ կորողները :

Երկայնաձև միակտուր քարերուն, որ կը կանգնուին քաղաքներու հրապարակաց և կամ յիշատակի արժանի տեղերուն վրայ, կոթող կ'ըսենք. ընդհանրապէս քառակողմ կ'ըլլան ասոնք, բլրգաձև ու սրածայր : Եգիպտացիք իրենց պարտաներուն կամ մեհենից մուտքը քարէ կոթողներով կը զարդարէին : Ոմանք կ'ըսեն թէ այս կոթողները ժամայոցի սլաքի պէս՝ արևուն բարձրութեան աստիճանները ցուցնելու համար էին, ինչպէս նաև օրերը, ժամերը և չորս եղանակները. այլք ալ դամբաններ են ասոնք ըսին : Ենչպէս որ կ'երևնայ նէ մեզի, աւելի ճշմարտանմանը այս երկրորդ կարծիքն է, որուն կը հետեին հիմնական հնախօսները, սրնք կոթողներու խորհրդատառ գրերուն վրայ՝ Եգիպտոսի թագաւորաց և կամ իշխանապետաց անուններ կարդացին :

Եւս կոթողներէն ոմանք գորշախայտ կճէ են. բայց ընդհանրապէս կարմիր կրանիտէ են, զոր Եգիպտոսի Սիեն քաղաքին քարահատներէն կը հանէին : Կեճ նեղութիւն և աշխատանք կը կրէին անշուշտ Եգիպտացիք այդ մեծաքանակ քարերը կտրելու և անոնց վրայ խորհրդատառներ քանդակելու համար, ու ընցմով լի են. բայց այսչափ բազմութիւն յիշատակարաններ կանգնուած տեսնելն ետքը՝ մեր զարմանքը աւելի անօր վրայ է, թէ ուրեմն ինչպիսի հնար-

քով ու ճարտարութեամբ կը փոխադրէին այն քարերը Սիեն քաղաքէն ինչուան Նեղոսի գետաբերանքը , ու զանոնք իրենց տեղերը կանգնելու դժուարութիւնը իրենց ճարտարապետական արուեստովը կը դիւրացընէին : Պլինիոս այսչափ միայն կ'ըսէ թէ « Արանիտի քարահատերը իհիսա քիչ հեռու ըլլալով Նեղոսի եզերքներէն՝ երբոր կոթող մը բոլորովին կը տաշուէր , քարահատին մէջ ճամբայ մը կը փորէին , որպէս զի կարենան երկու նաւակ կոթողին տակ բերել , որ երկու ծայրովը միայն քարաժայռերուն վրայ կը թռնած կը կենար . վերջէն այս նաւակները ջրանցքով ինչուան գետը կ'իջեցընէին » : Բայց թէ արդեօք Ազիպտայիք ինչպէս կոթողները կը կանգնէին՝ որչափ տեղեկութիւն մը չունինք :

Հռոմայեցիք այդ կոթողներուն մեծագործութեանը վրայ զարմացած , առին անոնցմէ իբրև յաղթանակի պէս Հռոմ բերին : Բմիանոս հին պատմիչը վեց հատ մեծ կը համրէ հոն բերուած , և 42 պղտիկ : Բյսօրուան օրս ալ ասոնք նոյն հոյակապ քաղաքին երևելագոյն ճիւղութիւններէն են . բայց Հռոմայ զանազան քաղաքական խռովութեանց ժամանակ կործանած կօտորտած ըլլալով , շատ մեծ աշխատանք հարկ եղաւ զասոնք կանգնելու համար . այն ալ մէկ քանին միայն այս բարեբաղդութիւնն ունեցան : Այլ որովհետև ասոնց պատմութիւնը կրնայ հետաքըննական բան մը ըլլալ ընթերցողաց , համարօտ մը գնենք հոս :

Ս. Պետրոս մայր եկեղեցոյն հին աւանդատան քովը՝ շատ ատենէն ՚ի վեր հողին տակը թաղուած մնացած էր ուրիշ աւերակաց հետ այս կարմիր կրանիտէ կոթողներէն մէկը , որ անստոյգ աւանդութեամբ մը կը կարծուէր թէ Սետտարի որդոյն յիշատակին նուիրուած ըլլայ : Սոյն կոթողը , որ կալիփուլա կայսեր ժամանակը Հռոմ բերուած է , ամենեւին վրան խորհրդատու չունի , և շատ հաւանական է որ Ազիպտացոյ կոթողներուն հռոմէական նմա

նութիւն մը ըլլայ՝ Ազիպտոս շինուած : Արիպտոսութիւնն էր 111 թղաչափ ու կէս (76 1/2 ոտք) . խարսխին լայնութիւնը 12 թղաչափ , իսկ գագաթինը 8 : Վսեստոս Ե սրբազան քահանայապետէն առաջ քանի մը պապեր մտածեր էին այս կոթողը Սրբոյն Պետրոսի հրաշալի հրապարակը կանգնելու , բայց զժուարութիւններէն և մեծ ծախքէն վախնալով՝ ոչ ոք կրցաւ իր խորհուրդը առաջ տանիլ : Բայց Վսեստոս Ե , որուն շատ սիրելի էր մեծագործութիւնը , ուզելով ամէն դժուարութեանց յաղթել՝ առաջարկեց այս իր խորհուրդը Ալբոպայի վարպետ ճարտարապետներուն ու հնարագիտաց : Արսեն թէ հինգ հարիւրի չափ անձինք առաջ նետուեցան , ու ամենքը մէյմէկ ուրուագիծ ներկայացուցին . բնականաբար բռնորին ալ կարծիքը իրարմէ տարբեր էին : Կոթողին կէսը հողին մէջ՝ գրեթէ կիսականգուն կեցած էր : Ինչիւրը անոր վրայ էր՝ թէ արդեօք կէսէն վար հողը փորելէն ետև նոյն դիրքովը փոխադրեն , չէ նէ հողէն դուրս մնացած մասն ալ բոլորովին պառկեցընէլէն ետքը : Բայ վերջին կարծիքին վրայ էր Ֆոնդանա երևելի ճարտարապետը , և կը սնդէր՝ ընդդէմ ընդհանուր կարծեաց՝ թէ պէտք է պառկած դրքով փոխադրել զկոթողը , և տեղը հասնէլէն վերջը ոտքի վրայ կեցընել : Ֆոնդանա ուրիշ պղտի կոթողի վրայ յաջողութեամբ փորձ մը կատարել տալով , հասարակաց ընդունելի եղաւ իր կարծիքը . և թէպէտ Վսեստոս իրեն երկու օգնականներ ալ աուաւ , բայց Ֆոնդանա չընդունեցաւ և ուզեց այս փառքը միայն ինքը ստանալ՝ ամէն վտանգ յանձն առնելով : Կոթողին ծանրութիւնը կը կշռէր 800,000 լիպրա . իսկ այս աշխատութեան համար բռնուած արուեստաւորաց թիւը 900 էր , և 140 ալ ձի : Կոթողին գեանին վրայ պառկած մասը 3 թղաչափ սկան վեր վերցընել գետնին երեսէն . այդ գործողութիւնը տասուերկու ժամով եղաւ , անբաւ բազմութեան գիմաց , որոնց խստիւ արգէ



Հռոմայ Հասարակաց ըստ յաճ հրապարակին կորոզը :

Ըեալ էր խօսիլ կամ ձայն հանել : Պարծաւորները փողահարին ձայնին համեմատ կը շարժէին , թմբուկին ձայնով ալ կը հանգչէին : Հրապարակը տարին կոթողը՝ հորիզոնական դրքով չորս զանի վրայ պառկեցուցած : Բայց խարըսխին վրայ բարձրացընելու համար սպասեցին որ ինչպէս սրբազան քահանայապետը հրամայեր էր՝ ամառնային տաք ամիսները անցնին . վերջապէս 1586

տարւոյն սեպտեմբերի 10^{ին} հաստատեցին կոթողը զարմանալի գործունէութեամբ : Ըրշալուստն սկսեր էր գործողութիւնը , և 52 ժամով լմնցաւ՝ արևը մտնելու ժամանակ : Այն կոթողը անկործանելի կանգուն կեցած է ինչուսմը հիմն անուանի ճարտարապետին դրած տեղը :

Ֆոնդանային ձեռք զարկած գործոյն յաջողելուն վրայ բոլոր քաղաքացիք

Ծափաձայն գովեցին՝ և Ղասոսոյ ա-
նուանի բանաստեղծը երկու անգամ
այս կոթողն ու անոր վրայի խաչը նուա-
գեց : Վսեստոս սրբազան քահանայա-
պետն ալ իր սրտին ուրախութիւնը ցու-
ցընելու համար՝ երկու միտալ քանդա-
կել տուաւ յիշատակի համար , և ազ-
նուականութեան պատուով ու ասպե-
տութեան նշանով մեծարեց զՅոնդա-
նա . և փոխարէն իր աշխատութեանցը
տուաւ 5,000 ոսկի վահանակ , և եկա-
մուտ կապեց 2,000 վահանակ՝ , որ որ-
դոց որդի իրեն սերունդը վայելէ զայն :
Ըսոնցմէ զատ Յոնդանայի մնացին կո-
թողը փոխադրելու համար շինուած մե-
քենաները , որոնցմէ 20,000 վահանակ
չահ ունեցաւ :

Ընալինը այսպիսի յաջողութեամբ
լմննալէն ետքը , Յոնդանա ամենեկին
դժուարութիւն չկրեց ուրիշ իրեք կո-
թող ալ կանգնելու , ինչպէս որ Վսես-
տոս կը փափաքէր : () գոստոսի մահար-
ձանին կոթողը , որն որ 66 ոտք բար-
ձրութիւն ունի , կանգնուեցաւ Աստ-
Ս . Մարիամ եկեղեցւոյն հրապարակը :
Հին հռոմայ աւերակները փորելու ժա-
մանակ գտնուեցան մէկալ երկու կո-
թողներն ալ , որոնցմէ մէկը Ս . Յովհան-
նէս Լափերանէան եկեղեցւոյն հրապարա-
կը բարձրացած է , մէկան ալ ժողովրդ-
դէան ըսուած (Piazza del Popolo) հրա-
պարակին մէջ :

Խտերանեան կոթողը թերևս ին-
չուան հիմա ճանչցուած կոթողներուն
մէջ ամենէն աւելի գեղեցիկն է և հըս-
կայածէր : Համբաւաւորն թոյաթմո-
սիս Բ Ագիպտացւոց թագաւորը , որ
և Սերիս կ'ըսուի ու Սերիսեան հրա-
չալի լիճը բանալ տուողն է , Ագիպտոսի
թագաւոր քաղաքին մէջ կանգնեց էր զա-
սիկայ . կամբիւսէս թէպէտ բոլոր միւս
կոթողները ջարդուբուրդ ըրաւ կործա-
նեց , բայց այս կոթողը նորոգել տուաւ :
Արջը կոստանդիանոս հռոմ բերել
տուաւ , ուր Յոնդանա Սեծ կրկիսին
աւերակներուն մէջէն դուրս հանեց :

Ըստ փառաւոր կարմիր կրանիտ քա-
րէ կոթողը աղուոր խորհրդատաւերով
քանդակուած է :

Կանք հիմա մեր պատկերքին մէջ
երեցած կոթողին ստորագրութեանը :
() ասիկայ ալ նոյն ճարտարապետը կան-
գնած է Բիաջչա Դէլ Բոֆօլոյ հրապարա-
կին մէջ , որուն մուտքը ամէն ճանա-
պարհորդաց զարմանք կը բերէ : Ագիպ-
տոսի հելլուպոլիս կամ Ըրեգ քաղա-
քին մէջ բարձրացընել տուեր էր այդ
կոթողը Սամեսիս Ա թագաւորը՝ ա-
րեգական տաճարին փառաւորութիւն
մը տալու համար . () գոստոս կայսեր
ժամանակ հռոմ բերուեցաւ և մեծ
կրկիսին մէջ դրուեցաւ : Ըսոր վրայի
յունական արձանագրութենէն իմա-
ցուեցաւ որ Ագիպտացւոց ծանօթ էր
եռաստուածութիւնը՝ : Իր պատուան-
դանին վրայ չորս նորաքանդակ սփինքս-
ներ դրուած են . իսկ ինքը իրեն մեծու-
թեամբը , գեղեցիկութեամբն ու խոր-
հրդատաւերուն կատարելութեամբը
Խտերանեան կոթողէն գրեթէ քիչ
վար կը մնայ :

Ըստ կոթողներէն զատ գեւ ուրիշ
ալ կը գտնուին հռոմայ մէջ , ինչպէս
է Պանթէոնի հրապարակին մէջինը ,
և այլն . իսկ Սոնդէ-Չիդորիոյի հրա-
պարակը բարձրացած կոթողը նոյնպէս
հելլուպոլոց մէջ կանգնուած էր Փսա-
մետիկոս Ա թագաւորէն , որ սփինքսի
նման ձևացուած է կոթողին վրան՝
մարդու գլխով ու թւերով , և նուէր մը
կ'ընծայէ Փրէ աստուծոյն : Ըսիկայ ալ
նոյնպէս () գոստոսի ժամանակ հռոմ
փոխադրուեցաւ , որպէս զի Ըրեոսի հրա-
պարակին մէջ եղած միջօրէականին
սլաքի տեղ բանեցընեն . Ընենդիկտոս
ժԳ սրբազան քահանայապետին ժա-
մանակը հողէն դուրս հանուեցաւ , և
Պիոս Զ ալ տեղը հաստատողն եղաւ :

1 Հեթանոս ազգի մը եռաստուածութիւն ճանչ-
նալը՝ արտաքին վկայութիւն մըն է Երրորդ ու-
թեան խորհրդոյն ճշմարտութեանն ու հարկա-
ւորութեանը :